Հետաքրքրության հայտ ներկայացնելու հրավեր
/Խորհրդատվական ծառայություններ, կազմակեպության ընտրություն/

28.04.2016թ.
Երկիրը՝ Հայաստան
Ծրագրի անունը՝ Էներգախնայողության ծրագիր
Դրամաշնորհ՝ TF 012163

Էներգախնայողության միջոցառումների իրականացման նպատակով Շինարարության աշխատանքների որակի տեխնիկական հսկողության EE-CS-26/2016 իրականացում հետևյալ օբյեկտներում:

1. Սպիտակի քաղաքապետարանի էներգախնայողության իրականացում, EE-CW-53/2016-2
2. <<Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ-ի էներգախնայողության միջոցառումների իրականացում, EE-CW-53/2016-1
3. ԷԽՄ Հրազդանի քաղաքապետարանում, N12 ՆՈՒՀ-ում, N13 ՆՈՒՀ-ում, EE-CW-51/2016
4. ԷԽՄ Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանում, EE-CW-52/2016
5. <<Քանաքեռ-Զեյթուն>> ԲԿ ՓԲԸ-ի էներգախնայողության միջոցառումների իրականացում, EE-CW-54/2016-1
6. <<Երևանի պարարվեստի պետական քոլեջ>> ՊՈԱԿ-ի էներգախնայողության միջոցառումների իրականացում, EE-CW-54/2016-2

Հայաստանի Հանրապետությունը Համաշխարհային բանկից /Գլոբալ բնապահպանական հիմնադրամի միջոցներով/ ստացել է դրամաշնորհ Էներգախնայողության ծրագրի ծախսերը հոգալու համար և նախատեսում է օգտագործել այդ միջոցների մի մասը խորհրդատվական ծառայություններ ձեռք բերելու համար:

Նպատակը
Էներգախնայողության ծրագրի շրջանակներում 2015 թվականին Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի կողմից նախատեսվում է հանրային շենքերի/լուսավորության համակարգերի էներգախնայողության միջոցառումների իրականացման աշխատանքներ, որի համար նախատեսվում է ձեռք բերել շինարարության որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություններ:

Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամը հրավիրում է շահագրգիռ խորհրդատվական կազմակերպությունների /Խորհրդատուներ/ ներկայացնել Հետաքրքրության հայտեր

Խորհրդատուն պետք է մատուցի շինարարության որակի տեխնիկական հսկողության մասնագիտական խորհրդատվական ծառայություններ համաձայն ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 1998թ.-ի ապրիլի 28-ի թիվ 44 հրամանով հաստատված «ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀՐԱՀԱՆԳԻ»:

Որակավորումը՝

Շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողություն իրականացնող խորհրդատու կազմակերպությունը պետք է ունենա հետևյալ որակավորումը՝

- Խորհրդատուի հիմնական աշխատակազմը պետք է ունենա բարձրագույն շինարարական կամ մասնագիտական՝ էներգետիկական կրթություն, համապատասխան փորձառություն և որակավորում / հինգ տարվա աշխատանքային փորձ ունեցող առնվազն 3 ինժեներ-վերահսկիչներ/;
- Շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողության իրականացման արտոնագիր;
- Շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողության իրականացման փորձառություն;
- էներգախնայողության բնագավառում աշխատանքի փորձառություն,
- ՀՀ շուկայում գոյություն ունեցող ջերմամեկուսիչ նյութերի իմացություն,
- Հագեցվածություն որակի հսկողության գործիքներով ու սարքերով, տրանսպորտային միջոցներով, համակարգչային ու գրասենյակային տեխնիկայով;

Հայտում ներառվող փաստաթղթերը՝

- Դիմում Հիմնադրամի տնօրենի անունով;

- Պետական գրանցման վկայականի պատճենը;
- Հայտը ստորագրողի լիազորագիրը;
- Խորհրդատուի ընդհանուր փորձը և այլ անհրաժեշտ տվյալներ;
- Շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողության իրականացման արտոնագրի /լիցենզիայի/ պատճենը;
- Վերջին 3 տարիների ընթացքում շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողության իրականացման փորձառության վերաբերյալ տեղեկատվություն;
- Աշխատակազմի ցանկը և դրանց աշխատանքային փորձառության վերաբերյալ տեղեկատվությունը (CV),
- Որակի հսկողության համար գործիքների, սարքերի, տրանսպորտային միջոցների, համակարգչային ու գրասենյակային տեխնիկայի ցանկը;
- Հայտը համատեղ ներկայացնելու դեպքում ՀՁԳ-ի պայմանագիրը;

Խորհրդատուների ընտրության չափանիշներն են.

- Ընկերության ընդհանուր փորձը (տարիների քանակը) /10 միավոր/
- Վերջին երեք տարիների ընթացքում կնքված նմանատիպ պայմանագրերի քանակը /10 միավոր/
- Հիմնական աշխատակազմի ընդհանուր փորձը և որակավորումը /20 միավոր/
- Հիմնական աշխատակազմի ծրագրին առնչվող փորձը և որակավորումը /50 միավոր/
- Ընկերության հագեցվածությունը անհրաժեշտ տեխնիկայով /10 միավոր/
- Ընդամենը՝ 100 միավոր

Խորհրդատուի ուշադրությունը պետք է ուղղորդել Համաշխարհային Բանկի՝ «Ուղեցույց՝ ՎՁՄԲ վարկերի և ՄՁԸ փոխառությունների և դրամաշնորհների ներքո Համաշխարհային Բանկի վարկառուների կողմից խորհրդատուների ընտրությունը և վարձումը» 2011թ. հունվար («Խորհրդատուների ուղեցույց») 1.9-ը կետին, որը սահմանում է Համաշխարհային բանկի շահերի բախման քաղաքականությունը:

Խորհրդատուները կարող են միավորվել այլ ընկերությունների հետ համատեղ ձեռնարկության կամ ենթախորհրդատուի ձևով՝ իրենց որակավորումը բարձրացնելու նպատակով: Խորհրդատուն կընտրվի խորհրդատուի որակավորման վրա հիմնված (ԽՈԸ) մեթոդով, որն ամրագրված է խորհրդատուների ընտրության Ողեցույցներում:

Հայտը ներկայացվում է հայերեն 1 բնօրինակ, 1 պատճե:

Մանրամասն տեղեկություններ կարող եք ստանալ ստորև նշված հասցեով ժամը 09.00-18.00:
Հետաքրքրության հայտերը պետք է ներկայացնել նշված հասցեով մինչև **2016թ. մայիսի 10-ը,** ժ. 17.00:

Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ
Տնօրեն՝ Թամարա Բաբայան
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Պռոշյան 1-ին նրբանցք, 32 տուն;
Հեռախոս / Ֆաքս՝ 374 10 – 58 – 80 -11; e-mail: g.zara@r2e2.am